



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ՊԱՅՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

ԲԵՅՈՒՄՆ 1870 ԸՄԻՆ

ՆԻՍՏ ՅԻՍՈՒՆ ԵՒ ԵՕԹՆԵՐՐՈՐԳ

16 ՓԵՏՐՎԱՐ 1873



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԸՄՄԸ ԱԼԹՔ ՃԵՄԼԸ ԽԸՆ

1873

# Ք. Ն. Պ. Հ. Ա. Ն. Ս. Ի. Բ. Կ. Մ. Պ. Ա. Մ. Պ.

ԲԱՅՈՒՄ 1870 ՍՄԲԵ


ՆԻՍՑ ԺԻ.

16 ՓԵՏՐՎԱՍ 1873

ՆԱԽԱԳԱՀ. — ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԻ.  
ԱՏԵՆԱՊԵՏ. — ՕՏԵԱՆ Գ. ԷՖԷՆՏԻ (Ս. Ստեփանյան)

## ԿԱՐԳ ԽՆԴՐՈՅ

1. Վաւերացումն նախորդ ատենագրութեանց :
2. Ընտրութիւն Սանժ. Վերաքննիչ Յանձնաժողովոյ :
3. Ատենական կանոնադրութիւն :
4. Կաթուղիկոսական և Պատրիարքական յարաբերութիւնք :
5. Տեղեկագիր Աղթամարայ Կաթուղիկոսական խնդրոյն :



Ատենադր բացուեցաւ ժամ 8 1/2 ին, ժինչդեռ 51 երեսխոխանք ներկայ էին, և ապա ին մեծադոյն մաս՝ չ'էր դոյացած, սակայն ընդհուպ թողոյն իւր անդամոց մեծամասնութիւնն ունեցաւ, որոց թիւը 57 ի հասաւ ի վերջէ :

### 1. ՎԱՆԵՐԱԳՈՒՄՆ ՆԱԽՈՐԴ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆԵՑ

Ժողովոյ նախորդ 53, 54, 55 և 56-րդ նիստերու ատենագրութիւններն սպաղորութեամբ երեսխոխանաց արդէն հաղորդուած վննելով Ատենապետ էֆէնան հրապարակեց թողոյն 53-րդ նիստի ատենագրութեանն սկսելով իւր գիտողութիւններն՝ եթէ ունի ընկրտ :

Ատենապետ էֆ. ի այս յայտարարութեան

վրայ գրաւոր գիտողութիւններ կը ներկայանան Գիւանին, և Ատենապետ էֆ. կը տրամադրուի զանոնք յատենի թողովոյ կարգալու :

ՊԷԿԵԱՆ Թ. ԷՑ. — Ժողովն որոշած է որ գիշուած ատենագրութեանց վրայ ըլլալիք գիտողութիւններն գրով ներկայանան Գիւանին, և առանց ընթերցման արձանագրուին ատենագրութեան մէջ, միայն թէ երբ թողովն մէջ չ'ըսուած խօսքեր գիտողութեան ձեւով կը ներկայացուին, այն ատեն անշուշտ չ'են անցնիր ատենագրութեան մէջ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՑ. — Գիշուած ատենագրութեանց համար միայն եղած է այդ որոշումը, և ըստ այնմ գիտողութիւններն չ'սկիսի կարգացուին :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Եթէ ուղեցի գրաւոր դիտողութիւններն միանգամ ընթեանու ժողովոյն առջեւ, պատճառն այն էր որ անցեալ նիստին՝ գրով խել մը դիտողութիւններ Գիւանին ներկայացրելու ատենագրութեանց մէջ արձանագրուելու են անսխալ, որոնք բնաւ դիտողութիւն չ'են, եւ իբր այն՝ չ'պիտի կրնային մուտ գանել ատենագրութեան մէջ, եթէ գրաւոր չ'լինէին: Բայց հիմա քանի որ ժողովոյ մէկ որոշումը կը յիշուի գրաւոր դիտողութիւններն չ'կարգաւոր մասին, Գիւանը ըստ այնմ կատարուի շարժիլ, միայն թէ՛ երբ օտարօտի խօսքեր տեսնուին անոնց մէջ դիտողութեան ձեւով գրուած, ի բաց պիտի թողուին եւ ատենագրութեան մէջ զուտ դիտողութիւններն արձանագրուին:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Սակայն ի վերջէ ներկայ նիստի տպագրեալ ատենագրութեան վրայ ալ կրնայ դիտողութիւն ըլլալ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Նորէն կը յիշեցնէ որ իմ պայմանէս զուտ ինչ դիտողութիւն ալ որ ներկայանայ, չ'պիտի անցնի ատենագրութեան մէջ: Երեսփոխան մը իւր ըսած խօսքին արձանագրութեան կերպին վրայ կրնայ միայն դիտողութիւն ընել:

ՊԵՆԵԱՆ Թ. ԷՖ. — Այս անկարգութեանց վերջ մը տալու համար պէտք է որ ատենագրութիւններն ժամանակին ներկայանան ժողովին: Այսպէս գրաւոր դիտողութիւններ ներկայացնելու հարկին մէջ՝ երեսփոխան մը կրնայ իւր չըսած որ եւ է մէկ խօսքը այս կամ այն նիստին մէջ գրել տալ ի վերջէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Արդէն հիմա ատենագրութիւններն սկսած են ժամանակին հրատարակուիլ, եւ իւրաքանչիւր նիստի ատենագրութիւն յաջորդին անվրէպ ներկայանալ:

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Յօր նիստի ատենագրութեան վրայ ես որ եւ է դիտողութիւն չ'ունիմ, բայց նոյն նիստին մէջ իմ Ատենագրութեան ժամանակին վերաբերող ատենագրութեանց նկատմամբ խօսքեր կան եղած, որոց ի պատասխան դիտողութիւններ չ'ունիմ ընելու, կրնամ արդեօք խօսիլ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այն օրը հոս գտնուե-

լով կրնայիք խօսիլ, բայց հիմա՝ ալ ժամանակն անցած է:

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Ատենապետ էՖ. եթէ երեսփոխան մը նախորդ նստի մը մէջ իրեն ակնարկութեամբ եղած խօսքի մը յաջորդ նստի մէջ պատասխանելու իրաւունք չ'ունենայ իսկ, ես իրաւունք ունէի ՅՕր նստի մէջ ինձ ակնարկութեամբ եղած խօսքերուն՝ ՅԵր նստի մէջ պատասխանելու. վասն զի անոնց մէկ մասին պատասխանը խնդիրն յուզուած օրը տալ խոստացած էի, եւ Գիւանն ալ այնպէս ընդունած էր, մէկ մասն ալ չէի հասկըցեր եւ չ'հասկնալս իմացուցած էի, ինչպէս ատենագրութիւնը կը հաստատեն շեռեւարար, եթէ չ'եմ սխալիր, ձեր քիչ մ'առաջ ըրած ազդարարութիւնը իմ նոյն պատասխաններուս չ'էին ակնարկեր:

Տ. ՄԱՏԹԷՈՍ Վ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Անցեալ նիստին վերջը՝ յանուն Կրօնական ժողովոյ առաջարկեցի Ազխարայ Կաթողիկոսական խնդրոյն առաջնութիւն տալ օրուան կարգին մէջ, այս առաջարկութիւնն նշանակուած է, բայց նշանակուած չ'է Կրօնական ժողովոյ կողմէ զայն ըրած լինիլ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Շատ աղէկ, կարձանագրուի ձեր դիտողութիւնը:

**ԳՐԵԼՈՐ ԳԻՏՈՂՈՒԹԻՒՆ**

ՄԻ. Նստին 771 երեսին մէջ իմ այս խօսքս պակաս է՝ թէ մեր Ազգը փոքր եւ հըպատակ ազգ մըն է, եւ մեծագոյն մասերնիս Սամանեան եւ Ռուսիոյ մեծագոր Տէրութեանց հովանաւորութեան ներքեւ, ուստի չեմք կարող զանոնք այս Ազգային ժողովոյս մէջ քննադատել, վասն զի Ազգին այս ժողովոյս մէջ այսպիսի խօսքեր ընել, ուստի, Ատենապետ էՖ. կը բողոքեմ Խիէկճեան էՖ. ի դէմ որ կը համարձակի այսպիսի բառերով խօսելու եւ կը բողոքեմ եւս ձեր դէմ որ խօսիլ կուտայք եւ չ'էք արդիւր: Կրկին նոյն երեսը խօսքիս պէտք է կցորդել, ուստի պէտք է որ մեր բողոքները արձանագրուին, ապա թէ ոչ այս ընթացքը հարուած տալ է Ընդհանուր ժողովոյ գումարման, ուստի կրկին կըսեմ, պէտք է որ

մեր բողոքը արձանագրուի որ հասկցուի թէ ոչ թէ Ընդհանուր ժողովն է այդ խօսքերը ընողը, այլ միայն Խիէկճեան էՖ: Նոյն նիստին 772 երես խօսքիս պէտք է կցուի, ես չ'զրուեմ որ այդպիսի ազատութիւն մ'ունիմք, այդպիսի խօսքեր ժողովոյս դադարման պատճառ կըլլան, ուստի Տէրութեան մը անունը մեր ազգային վիճարանութեանց մէջ ինչ բան ունին:

773 երես, Ատենապետի խօսքէն յառաջ կրկին բողոքեցի, որ Ռուսիոյ բառը չ'պիտի ըլլայ, ուրիշ մըն ալ ուրիշի վրայ պիտի խօսի եւ այդ ընթացքին հետեւութիւնը աղէկ չ'նկատուիր:

ՄԵ. Նիստին 786 երես Ա. սիւնակին մէջ նախ պէտք է Օգսէն էՖ. ի խօսքը թէ՛ այդ ինն երեսփոխանաց հարցումը նոյն ինքն ստորագրողք մտցած են, ըսել է թէ հարկ չկայ եղեր, ի պատասխան այս խօսքին՝ անմիջապէս ես խօսեցայ հետեւեալները « Ես ալ նոյն ինն երեսփոխանաց մինն եմ որ այս խնդիրը ստորագրութեամբ հարցուցինք եւ մէջն ալ Օգսէն էՖ. ն էր եւ կը զարմանամ որ մտոցուեր է կըսէ այժմ, ահա այս խնդիրը վիճի տակ եղած Ազգային Ս. Տեղեաց Ս. Յակոբայ եւ այլն տաճարաց մէջ Լատինացուց պատարագելութիւնը արուելու համար՝ Ազգային Պատրիարքարանէն Ս. Երուսաղիմայ Ամեն. Ս. Պատրիարքին հեռագիր քաշուիլը ստոյգ է՝ թէ ոչ, նախորդ Քաղաքական ժողովոյ Գիւանին հարցում ըրինք խնդիրը, այս խնդիրս է եւ ահա այսօր ալ կը կրկնեմք զայն, բայց ցաւալին այն է որ, « առաջարկութիւն 17 երեսփոխանաց » ինչ ըլլալը խնդրոց կարգին մէջ միշտ կը գրուի, բայց այս ինն երեսփոխանաց հարցումն ինչ ըլլալը չի գրուիր, այլ միայն հարցումն ինն երեսփոխանաց կըսուի եւ ինչ ըլլալը չ'գրուիր, եւ այս խօսքերը Ատենապետին խօսքերէն յառաջ պէտք էր գրուիլ, նոյնպէս պէտք է նոյն երես Բ. սիւնակին խօսքս այսպէս գրուի « Ս. Պատրիարքը այսպիսի խնդիր մը ինքնին չ'կրնար դործել եւ եթէ գործէ պատասխանատու է ձեռնհաս ժողովին, մանաւանդ այս խնդիրը՝ զոր ժէ թէ այս ժողովը իրաւունք ունի հարցունել ու դիմանալ այլ եւ բողոք Հայոց ազգ. Ս. Երուսաղէմայ խնդիր է, Ս. Յակոբայ տաճարի խնդիր է, այն Ս. Տեղե-

րը բողոք Հայոց ազգին է, ուստի Ս. Պատրիարքի խօսքը պէտք է ուղղուի, չեմք կրնար այնպիսի խօսք մը ընդունիլ:

Նոյն նիստին 788 երես Ա. սիւնակին մէջ, Ս. Նախագահին խօսքին պատասխան ըստի թէ « Հայոց Պատրիարքը Հայոց Ազգին պատասխանատու է, եւ Հայոց Ազգի ներկայացուցիչ ժողովն է այս, ուստի պէտք է ժողովոյս յայտնել այժմ, եւ ինչ ըսել է ժողովոյս յայտնել չուղել:

16 փետր. 1873 (Ստորագ.)  
Ք. ՂԱՂԱՅԱՆ

Ատենագրութեանց վրայ եղած դիտողութիւններն վերջանալէ ետեւ՝ Ատենապետ էՖ. յայտարարելով թէ տակաւին մեծագոյն մաս գոյացած չ'լինելուն՝ չ'են կրնար ատենագրութիւններն քուէի գրուիլ, անոնց վաւերացումը կը վերապահէ մեծագոյն մասի ներկայութեան, եւ հետեւապէս օրուան կարգը ձեռք կ'առնու:

**2. ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՍԵՄ. ՎԵՐԸՆՆՈՒԹԵՆ ՅԵՆՉՆԸՓՈՂՈՎՈՅ**

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը յիշէք անշուշտ, երեսփոխան էՖէնտիններ, որ ժողովը նախորդ նիստին մէջ որոշեց Սահմանագրութեան վերաբերնիչ Յանձնաժողովն կազմել ըստ տրամադրութեան վերջին յօդուածոյ Սահմանագրութեան, քաննէն՝ տասներկուքի ղեկչելով միայն անոր անդամոց թիւը, այս որոշման համեմատ Ընդհանուր ժողովոյ մէջէն չորս հոգի, Կրօնական եւ Քաղաքական ժողովներէն երկերկու անդամ, եւ չորս Տեսուչ Խորհուրդներէն ալ մէկ մէկ անգամ պիտի ընտրուին ընդ ամէնը 12 հոգի: Գիւանը Կրօնական եւ Քաղաքական ժողովոց եւ Տեսուչ Խորհրդոց անդամներուն մէկ ցուցակը պատրաստել տուաւ երեսփոխան էՖ. ներուն քուէ տալու դիւրութեան համար: Եւ թէպէտ ժողովը տակաւին իւր մեծագոյն մասը չ'գտաւ, սակայն օրինական թիւն ամբողջանալու խիստ մօտ է, եւ արգելք մը չկայ որ երեսփոխանք այժմէն նոյն ցուցակին նայելով՝ իրենց քուէներն պատրաստելու զբաղին:

Ատենապետ էՖ. այս յայտարարութիւնն ընելով յիշեալ ցուցակը ի լուր երեսփոխանաց կ'ընթեանու եւ ժողովը այս պահուս իւր ան-

դա ինչ մեծագոյն մասը պանելով քուէարկութեան կը հաւանի ձեռնարկել, հետեւապէս գլխանին առաջարկութեամբ ընտրական գործողութեանց քննիչ կորչուին:

- S. Մատթէոս Վարդապետ Եղիշբեկեան
- S. Ղեւոնդ » Փիրղալեան
- Սիմէօն Էֆէնտի Միքայէլեան
- Մեսրոբ » Այլատեան

Քուէարկութեան գործողութիւնը քննչաց միջոցաւ կը կատարուի, որու 32 կրեւոյններ կը մասնակցին, իսկ քուէնամարի գործողութեամբ ժողովուրդը կը յանձնէ զայն կատարել առանձինն, որոնք Ստեփանոս Էֆ. ի աղագարութեան վրայ իրենց հսկողութեան ներքեւ ունենով քուէաւոր, ժողովէն կը մեկնին այլուր, քուէնամարը կատարելու եւ արդիւնքը ժողովոյն բերելու համար:

Ստեփանոս Էֆ. այս պահուս յայտնելով թէ ժողովոյ նախընթաց 33, 34, 35, եւ 36-ը նիստերու առնապարտութեանց վրայ գլխողութիւններն եղած են արդէն, քուէի կը գնէ նոյն առնապարտութիւններն, եւ ժողովը Ընդհանուր հաւանութեամբ կընդունի եւ կը վաւերացնէ զանոնք:

Յետոյ Ստեփանոս Էֆ. Վառնայի վիճակին նորնաիր կրեւոյններն Գէմալիկեան կարապետ Էֆ. ի մէկ հրաժարագիրը կը ներկայացնէ ժողովոյն եւ կը յայտնէ միանգամայն որ S. Յարութիւն Գահանայ Պաշտու եւ Փօլօլեան Աւետիս Էֆ. երեք յաջորդական նիստերու բացակայ գտնուելով ըստ օրինի հրաժարած են իրենց կրեւոյններէն պաշտօնէն: Ժողովը այս երեք հրաժարողաց տեղ նոր ընտրութիւն կորոչէ եւ կանցնի օրուան կարգին:

3. ԱՏԵՆԱԳԵՏ ԿԵՆՏՐՈՆԻՔԻՆ

ԱՏԵՆԱԳԵՏ ԷՖ. — Ժողովը իւր 33-րդ նիստին մէջ Ստեփանոս Կանոնադիրը մինչեւ 10-րդ յօդուածը նկատողութեան առնելով պէտք եղած սրբազրութիւններն ըրեր եւ ընդունելու է, ուստի հիմա 11-րդ յօդուածէն պիտի սկսի իւր քննութիւնը:

Ահաւասիկ նոյն յօդուածը  
« Յօդ. 11-րդ. Մեծագոյն մասի գոյացումը ներկայութեան տուժարէն կ'ստաւորուի,

յորմէ հետէ ժողովոյն ամէն որոշումն օրինաւոր է, թէեւ կրեւոյններէն մէկ մասն անձնապէս հեռացած ըլլայ ժողովարանէն: »

Կը հրաւիրեմ ժողովականները այս յօդուածին վրայ իրենց գլխողութիւնն ընելու, եթէ ունին:

ՊԷԿԵԱՆ Ք. ԷՖ. — Ես կը կարծեմ թէ ժողովարանէն հեռացող կրեւոյններէն մասն մը գնել հարկաւոր է՝ որոշում ընել կարողանալու համար, վասն զի ժողովը իւր մեծագոյն մասը գտնելէ ետեւ հեռուցուելու քուէարկութեանց մեկնելովը կրնայ անոր օրինակեան թիւը տարածապայման կերպով նուազել, այնքան որ մինչեւ հիւզ կամ տասը հոգի թիւնել եւ այսպիսի վիճակի մը մէջ ծանր ծանր որոշումներ տեղի ունենայ: Ուստի լաւագոյն կը թուի ինձ սահման մ'որոշելով այս տեսակ պարագայի մէջ մեծագոյն մասին թուոյն կէսէն աւելին գէթ փնտաել:

ԱՏԵՆԱԳԵՏ ԷՖ. — Պէկեան Էֆ. ի առաջարկութիւնը, կրեւոյններն Էֆէնտիներ, իմացար: Կանոնադիրն 11-րդ յօդուածը կը արբամադրէ որ երբ ժողովը միանգամ մեծագոյն մաս գտնէ եւ այնուհետեւ հեռուցուէ այս թիւը պակսելով մնացորդ կրեւոյնները փոքր մաս մը կազմեն, տակաւին օրինաւոր համարութիւն անոնց կողմէ տրուած ամեն որոշումներն, վասն զի անգամ մը մեծագոյն մաս գոյացաւ արդէն, իսկ Պէկեան Էֆ. ի մնացորդ կրեւոյններէն թիւը կրնայ մինչեւ 5 ի թիւնել, կըսէ, եւ անտեղի գտնելով զայս՝ սահման մը կ'առաջարկէ գնել մնացորդ կրեւոյններէն թուոյն՝ որոշում ընելու համար:

ԽԱՆՏԱՆԵԱՆ Յ. ՊԷՅ — Երբ ժողովը միանգամ իւր անդամոց մեծամասնութիւնը կը գտնէ, եւ ներկայութեան տուժարը կ'ստորագրուի, այնուհետեւ որքան ալ ժողովէն մեկնողներ լինին, որքան ալ փոքրադոյն մաս մը մինչեւ իսկ մէկ անձ մը գտնուի, տակաւին տրուած որոշումն օրինաւոր է, վասն զի ժողովը իւր մեծագոյն մասը գտնելով որոշում տալու իրաւունքն ստացաւ արդէն եւ այդ իրաւունքը անժամանակ ժողովէն աւանդ քալող կրեւոյնները իրենց հետ չ'են տանիր եւ անոր գէթ երկրորդական թիւ մը, ուրիշ իրաւունք մը չ'կրնար սահմանուիլ: Ա՛յ կրնայ ըրու-

նադատել կրեւոյններն որ որ մինչեւ վերջը մը նայ ժողովոյն մէջ, թերեւս իւր կամքին հաւատակ խնդիրը ելք մ'ունենցաւ եւ անուր քալելու պէտք եւ որ կրեւոյնները կրնայ անձամանակ իւր մեկնելէն ետեւ տրուած որոշումի մը գէթ բողոքել, եւ ինչպէս կարելի է արդէն գնել որ խաւսը մը կրեւոյններէն ժողովին մէկ որոշումը յետաձգելու համար չը միարանին ու չ'մեկնին ժողովէն:

ՂԱԶԱՐԱՅԵԱՆ Ք. ԷՖ. — Յակոբ պէյի դիտողութիւնը իրաւացի է, ժողովը երբ որոշում չ'առած կրեւոյններն մը կը մեկնի, իրաւունք չ'ունենար բողոքելու, բայց տակաւին անպատեհութեան տեղի չ'էր գոյացուէ համար պէտք է որ գէթ թիւ մը ցոյց տրուի:

S. ՍՄԻՐԱՅԻՍ Վ. — Ուրիշ անդամներ տեսնուեցաւ արդէն որ ժողովոյ մէջ յազումներ ծագելով խնդիրը որոշման կէտին հասած ատեն շատեր մեկնեցան ժողովէն եւ փոքրագոյն մաս մը մնաց: Կրնայ ըլլալ որ միեւնոյն պարագայն պատահի եւ մնացորդ փոքր մասը իւր ուղած կերպով խնդիր մը որոշէ:

SԱՏԵԱՆ Ա. ԷՖ. — Եթէ ժողովը զաղտնի քուէարկութեամբ որոշելի խնդիր մը կամ ընտրութիւն մ'ունենայ, ինչպէս էր այս աւուր Յանձնաժողովոյ ընտրութեան խնդիրն, այն ատեն մանաւանդ խիստ զգալի կը լինի մեծագոյն մասի ներկայութեան կարեւորութիւնը, ուստի եւ կ'առաջարկեմ որ ժողովը որքան ալ առաջուց մեծագոյն մաս գտած լինի, նորէն այդ օրինակեան թիւը փնտաէ որոշում տալու ատեն, եւ եթէ այս դժար կը թուի, գէթ մեծագոյն մասէն քիչ պակաս թիւ մը որոշուի:

ԱՏԵՆԱԳԵՏ ԷՖ. — Չեր առաջարկութիւնը համաձայն կը գտնեմ Պէկեան Էֆ. ի առաջարկութեան:

ՂԱԶԱՐԱՅԵԱՆ Ք. ԷՖ. — Ժողովոյ մէջ անգամ մը մեծամասնութիւն գոյանալէ ետեւ նորէն որոշման ատեն մեծագոյն մաս փնտաելը պարզապէս անգործութեան դատապարտելի ըսել է, ուստի աւելի գործնական ու բանաւոր միջոցն է թիւ մը սահմանել: Ինչպէս Պէկեան Էֆ. առաջարկեց:

ՊԷԿԵԱՆ Ք. ԷՖ. — Կր տեսնեմ որ իմ

առաջարկութիւնս ձայնակիցներ կը գտնէ, ուստի կը ձեւակերպուի զայն եւ կրեւոյն որ ինչպէս ժողովը օրինաւոր լինելու համար անդամոց մեծագոյն մասին ներկայութիւնը հարկ է, որոշում տրուելու ատեն ալ կ'էն մեծագոյն մասը պակաս է, մեծագոյն մասին կէսէն մէկ աւելին փնտաուի: Դոր օրինակ եթէ 60 թիւը ժողովոյ անդամոց մեծագոյն մասը կը կազմէ, 31 թիւը փնտաուի, ըսել կուզեմ ընտրեալ կրեւոյններէն 17 ին ներկայութիւնը:

ՂԱԶԱՐԱՅԵԱՆ Ք. ԷՖ. — Կը ձայնակցիմ Պէկեան Էֆ. ի:

ԷՆՔՍԷՐԱՅԵԱՆ Տ. ԷՖ. — Երբ ժողովը մեծագոյն մասով բացուի, այնուհետեւ որքան ալ պակաս անդամոց թիւը, ըստ իս կրնայ շարունակել սկսուած խնդիրն ու որոշում տալ, միայն թէ ուրիշ խնդիր չ'կրնար յազուիլ եւ լուծուիլ:

ՄԻՐԵՅԻՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Իրաւ է որ ընդհանուր ժողովոյ մէջ խիստ սակաւ թիւ կրեւոյններէն մնացած ատեն, որոշում տալն լաւագոյն չ'էր իր, բայց Պէկեան Էֆ. ի առաջարկութեան հետեւանաց մէջն ալ ուրիշ անտեղութիւններ կան, որոց գլխաւորն է՝ որոշումներու ետ ձգուիլը, զոր պիտի յաջողին ընել, մաս մը կրեւոյններէն զուրս կ'ենելով ժողովէն, պահանջուած քառորդ թիւը պակսեցնելու եւ հասուն խնդրոյ մը որոշումը այս կամ այն դիտումով առկա ձգել տալու համար: Ամենէն արդէն է խիստ կասկածոտ չըլլալ եւ արդի ատենական ընթացքը շարունակել ուստի եւ կ'առաջարկեմ կանոնադիրն 11-րդ յօդուածը պահել անփոփոխ եւ գործադրել նոյնութեամբ:

ՊԷԿԵԱՆ Ք. ԷՖ. — Այդ առաջարկութիւնը հնարողը եւ չեմ, երբեք մեր ուսուցիչն է, եւ անոր օրինակը մեր առջեւը կը կենայ: Կրտեն թէ Անդրիոյ Աղագայն ժողովին մէջն ալ երբ խնդիրը որոշման գայ, թիւ մը կայ յատուկ, զոր կը փնտաեն գլխաւորը համարելով, եթէ ամբողջ գտնեն զայն՝ որոշում կուտան, եթէ ոչ՝ չեն որոշեր խնդիրը:

ԱՏԵՆԱԳԵՏ ԷՖ. — Երբոք՝ Սահմանադրական ժողովներուն մէջ քուէի ատեն թիւ մը կը փնտաուի եւ իմ գլխոցմս՝ այն թիւը մեծա-

գոյն մասն է, մենք եթէ այդ գրութեան ծառայելը կը վախցուի որ Ընդհանուր Ժողովը անգործութեան կը դատապարտուի:

ՊԵԿԵԱՆ Ք. ԷՖ. — Ուրեմն պէտք է ժողովին որոշումը ետ ձգել տալու համար անժամանակ մեկնող երեսփոխանաց նկատմամբ ալ կանոն մը յաւելուլ ատենական կանոնագրին մէջ:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Այդ գիտաւորութիւնը ունեցող երեսփոխանին պատճառ չ'պահար մեկնելու համար, գլխիցաւ ունիմ, կըսէ, կամ ուրիշ բարուր մը կը գտնէ եւ կառնու կը քալէ:

ՄԱՐԳԱՐԵԱՆ Յ. ԷՖ. — Ես կառավարեմ որ ժողովը որոշում տալու ատեն մեծագոյն մասին 2/3 ին ներկայութիւնը փնտռէ, վասն զի որքան ալ երեսփոխանաց մէկ մասը գլխիցաւ պատճառելով մեկնի ժողովէն, տակաւին շատը կը մնայ ժողովին մէջ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Երեսփոխան էֆ.ներ, նախ խնդիրը աղէկ մը բացատրեմ ձեզ, որպէս զի եթէ չ'հասկցող կայ լուսաւորուի: Գիտէք որ որոշեալ ժամուն ատենը կը բացուի ներկայ երեսփոխաններով եւ որոշում կը արուի մեծագոյն մասով: Երբ ներկայութեան տուժարին մէջ մեծագոյն մասի ստորագրութիւնը նշանակուած կը տեսնեմք, ժողովոյ ամէն որոշումներն օրինաւոր կը համարուիք, նոյն իսկ եթէ ի վերջէ երեսփոխաններէն մեկնողներ ալ ըլլան եւ մեծագոյն մասի թիւը պակսի: Այսպէս կը արամագրէ նաեւ ատենական կանոնաց ծրագրին 11-րդ յօդուածը: Բայց Պէկեան էֆ. զիտել տալով որ բնաւ թիւ մը, սահման մը նշանակուած չէ, եւ կրնայ երեսփոխանաց թիւը հետզհետէ նուազելով մինչեւ 3 հոգի մնալ ժողովին մէջ եւ որոշում արուիլ, անտեղութիւն կը համարի զայս եւ սահման մը դնել կառավարիչէ:

Այս սահմանի մասին երկու առաջարկութիւն կայ, մին՝ Պէկեան էֆ. ի կողմէ, որ է՝ երբ մեծագոյն մասին կէսն մին աւելին ներկայ գտնուի, եղած որոշումն օրինաւոր համարուի, իսկ եթէ պակաս ոչ: Օրինակի համար, ըսենք թէ 34 թիւը ընտրեալ երեսփոխանաց մեծագոյն մասը կը կազմէ, եւ այս թիւը

գոյացած ատեն ամէն որոշում օրինաւոր է, թէ որ այս 34 երեսփոխաններէն մինչեւ 26 ը մեկնած լինին եւ 28ը ներկայ գտնուի այն ատեն գարձեալ ժողովը պիտի կրնայ որոշում ընել եւ իւր որոշումն օրինաւոր համարուի, բայց երբ 28ը մեկնած լինի, եւ 26ը միայն ներկայ գտնուի, այն ատեն օրինաւոր չ'պիտի համարուի ժողովոյ որոշումը: Իսկ Մարգարեան էֆ. քիչ կը գտնէ այս թիւը եւ կառավարիչէ որ երեք մասին երկուքը զէթ ներկայ գտնուի որոշում ընելու համար: Հիմա այս առաջարկութիւններն քուէի գնելու համար կը խնդրեմ առաջարկողներէն որ զրով ներկայացնեն:

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Եթէ ատենական կանոնագրին մէջ կանոն մը, յօդուած մը յաւելնայ ժողովոյ գումարման ժամագրութեան նկատմամբ եւ այս յօդուածը ժամագրութեան նպատակ մը եւ հետեւութիւն մը նշանակէ, ինձ այնպէս կը թուի թէ՛ այս մեծագոյն մասի խնդրոյն վրայ յարուցեալ կրօնի մը կը լուծէ եւ երեսփոխանական ժողովոյ ներկայացեալ խնդրոց լուծմանը կը նպաստէ: Կանոն եղած է որոշեալ ժամուն ատենը բանալ, վիճարանութեան սկսիլ եւ խնդրոց որոշումը տալ մեծագոյն մաս գոյացած ատեն: Բայց տեսէք, երեսփոխանք հրաւէր կրնող նին ժամ 6 ին ժողովին գալու, բայց որոշեալ ժամուն տակաւին ոչ ոք եկած է, քսան երեսուն հոգի կուգան հետզհետէ եւ անագան ուրեմն ատենը կը բացուի, յորմէ ետեւ հազիւ մեծագոյն մաս կը գոյանայ եւ ժողովը որոշում ընելու իրաւունք կատանայ, իսկ հիմա ալ թիւ մը կառավարիչի որ երբ հետզհետէ երեսփոխանաց մեկնելովը մեծագոյն մասը պակսի ատենը չ'վերջացած, ժողովը այդ որոշեալ թիւը փնտռէ որոշում ընելու համար:

Չեմ կրնար բնութեւ թէ մեծագոյն մաս՝ Հայոց ազգի ժողովներուն համար ինչ նշանակութիւն ունի, եւ ժամագրութեան նպատակն ինչ է երբ հետեւութիւն չունի: Օրէնքը ամենուս վրայ պարտաւորութիւններ գրած է, իւրաքանչիւր պաշտօնեայ իւր պաշտօնին բնութեան համաձայն պարտաւորութիւններ ունի, բայց երբ այդ պարտաւորութիւնները չ'կատարուին, ինչպէս օրէնքը կրնայ իւր ուժը պահել եւ նպատակին ծառայել: Ուրիշ սոթիւ

մը պարտուց եւ իրաւանց սկզբանց վրայ խօսելով զիտել առած եմ թէ 300 ընտրող ունեցող թաղի մը մէջ ընտրական գործողութեանց ատեն 30 անձինք միայն քուէ կուտան եւ այս ատենակ ընտրութիւն մը ընդունուելով ընտրողն ազատութիւն կը գտնէ իւր պարտաւորութիւնը գրեւոր եւ առանց պարտուց ենթակայ լինելու, լոկ իրաւունքներ կուենայ:

Այսպէս ալ մեր երեսփոխանները ժողովոյ գալու հրաւէր եւ ժամագրութիւն կրնող նին, կամ բոլորովին չ'են պատասխաններ, կամ անագան կուգան եւ կամ կուգան ու կը մեկնին: Ուստի ես կը պնդեմ որ, ինչպէս ուրիշ ատեն ալ խօսած եմ, երբ ժամագրութիւն վիճելով որոշեալ ժամուն ատենը բացուի, ժողովը որոշում ընելու կարող լինի, առանց մեծագոյն մասի ներկայութեան սպասելու:

Եւ արգարեւ երբ երեսփոխան մը ժողովին կուգայ իւր պարտաւորութիւնը կատարելու համար, եւ կը մեկնի քիչ մը ետեւ՝ արգիւնով ժողովը իւր գործելու ազատութեանէն, ըսէք ինձ, ինչ տարբերութիւն կայ այն երեսփոխանին՝ որ հրաւիրուող ընդունելով բնաւ չ'գար եւ անոր մէջ՝ որ կուգայ ու ատենը չը վերջացած կը մեկնի, կաշկանդելով նաեւ ժողովը: Եթէ կուգէք երեսփոխանական ժողովոյ գործերը ընթացիկ վիճակի մէջ գնել, իմ ցոյց տուած միջոցս ամենէն բանաւորն է եւ ազդուն, ապա թէ ոչ ժամ 8ին, 9ին ատենան բանալով չ'եմք կրնար Ազգին գործերը սնորհել, Ինչ որ է, կառավարիչի հիմա որ ատենական կանոնագրին՝ որու մինչեւ 10-րդ յօդուածը քրններ ու սրբազներ եմք՝ մնացեալ յօդուածոց քննութիւնը յանձնուի վերաքննութեան Յանձնաժողովին, որպէս զի լաւ մը քննէ, ձեռք է, եւ իւր տեղեկագրովը բերէ Ընդհանուր ժողովին, վասն զի այս ժողովին մէջ կատարուելիք գործ չ'է այդ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ես կարծեցի, Սրբազան Հայր, որ միայն 11-րդ յօդուածը Յանձնաժողովին յանձնել կուգէք:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Նախագահ: Սրբազան Հօր առաջարկութիւնը կերկրորդեմ:

ՏԱՏԵԱՆ Ա. ԷՖ. — Կը կրկնեմ:

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Նախագահ: Սրբազանը կառավարիչէ ատենական կանոնագ-

րին քննութիւնը Սահմանադրութեան վերաքննիչ Յանձնաժողովին յանձնել, Նախ զիտել կուտամ ժողովին թէ քանի որ Յանձնաժողովին բերելիք ծրագիրը նոյն ինքն ժողովն ալ իւր վիճարանութեան բովէն պիտի անցնէ, ինչ հարկ ուրեմն այս կանոնագիրը վերաքննութեան Յանձնաժողովին զրկելու, երկրորդ՝ քանի որ կանոնագրին մինչեւ 10-րդ յօդուածը արդէն ժողովը նկատողութեան առեր եւ ընդունել է, Յանձնաժողովը միւս յօդուածները միայն պիտի քննէ թէ ոչ առջիններն ալ աչքէ անցնէ:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ես ալ ի սկզբան սխալ հասկցայ Նախագահ Սրբազանին առաջարկութիւնը: Նախագահ Սրբազանը կերպով մը ատենական կանոնագիրը Սահմանադրութեան վերաքննութեան հետ յարակից կը գտնէ եւ կառավարիչէ Յանձնաժողովին յանձնել զայն: Ուրեմն Յանձնաժողովը նախ Սահմանադրութիւնը պիտի վերաքննէ եւ յետոյ ատենական կանոնագիրը քննէ: Կը յիշեմ որ անգամ մը այս ժողովոյն մէջ Օգսէնէֆ. ն ըսաւ՝ թէ լաւագոյն է ատենական պէշ կանոնագիր մ'ունենալ, քան ընաւ չունենալ, իրաւացի է այս խօսքը, ատենական կանոնագիրը ստիպողական եղած է, ոչ միայն Ընդհանուր ժողովին, այլ եւ գաւառներուն համար: Վասն զի Սահմանադրութիւնը գործադրել սկսող գաւառներէն ատենական կանոնագիր կուգեն, եւ Ընդհանուր ժողովը դեռ իւր կանոնագիրը չունի, որ Ազգային Վարչութիւնն ալ անոր հետեւողութեամբ գաւառաց համար պատրաստէ: Վերջապէս այս կանոնագրին ստիպողականութիւնը անփոփոխ է, եւ եթէ Յանձնաժողովին յանձնուի այն, պէտք է որ ամենէն առաջ կանոնագրին քննութիւնը կատարէ ու բերէ ժողովին:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Նախագահ: Սրբազանը կ'առաջարկէ ատենական կանոնագրին ամբողջ Սահմանադրութեան վերաքննիչ Յանձնաժողովին յանձնել, բայց ես եւ ուրիշներ այնպէս կարծեցինք որ միայն 11-րդ յօդուածը Յանձնաժողովին զրկել կուգէ, որովհետեւ նոյն յօդուածը սկզբան խնդիր մ'է, մեծագոյն մասի օրինաւորութիւնը արամագրող խնդիր մ'է զլուսական խնդիրներէ բարձր եւ Սահմանադրութեան մէջ իւր որոշումն առնելու կարօտ







ԳԻՆ 2 ՂՈՒՐՈՒՇ

ՄՆՓԱՎԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՄՆՏՈՒՎԻՆ

Կը ծախուի ի Գիւանատան Պատրիարքարանի, եւ կը գանուի  
Նկեզեցեաց քանկալները :